



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«25» 10 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 93

**Ձեռնարկողը՝**

**<<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ**  
*ք. Շրազդան, Կենտրոն թաղ., Վարչական շենք*

**Գործունեությունը՝**

**Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային  
թափոնների աղբավայրի կազմակերպման  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն**  
*<< Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր*

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝**



*Սահակյան*

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 93

«25» 10 2017թ.

**«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպման գնահատման հաշվետվություն**

*Handwritten signature and notes on the left margin.*


Պատվիրատու՝	«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ
Նախագծող՝	«Տրանսնախագիծ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ.
Տեղադրման վայրը՝	ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ)՝ աջակցությամբ նախատեսում է ՀՀ Կոտայքի մարզի ք.Հրազդանի գոյություն ունեցող աղբանոցին կից եվրոպական ստանդարտներին ռեգիոնալ կոշտ թափոնների աղբավայրի կառուցում: Ներդրումներն ուղղվելու են Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի աղբահանության համար նոր աղբավայրի, մոտեցնող մուտքային ճանապարհի, ճանապարհային հանգույցի, անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման, տրանսպորտային միջոցների, կոնտեյներներ և թափոնների կառավարման սարքավորումների ձեռք բերելուն:

Կոտայքի մարզի առաջարկվող թափոնների կառավարման նոր համակարգն ընդգրկելու է թափոնների հավաքման կոնտեյներները ամբողջ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում և երկու փոխաբեռման կայան Մարտունիի և Աբովյանի տարածաշրջանում, ի լրումն՝ նոր ինքնաթափ բեռնատարների, որոնք նախատեսված են կոնտեյներների մեխանիկական դատարկման և Հրազդանի նոր մարզային աղբավայր աղբը տեղափոխելու համար: Նոր աղբահանման համակարգն այս քաղաքներում կներառի նոր ինքնաթափ բեռնատարներ, որոնք կտեղափոխեն հավաքված աղբը առաջարկվող Հրազդանի աղբավայր:

Գյուղական համայնքները կապահովվեն թափոնների կոնտեյներներով՝ յուրաքանչյուր գյուղի նշանակված վայրում աղբահավաքի համար: Այս կոնտեյներները կդատարկվեն ինքնաթափ բեռնատարների կողմից, որոնք պատկանում են աղբավայրի կառավարման ընկերությանը, դեպի Հրազդանի աղբավայր տեղափոխելու համար:

Հրազդանի նախատեսվող աղբավայրի տեղանքը նախկինում շահագործվել է որպես քարհանք, որն օգտագործվել է տեղի ցեմենտի գործարանի համար կավի ստացման նպատակով: Աղբավայրը ունի նախագծված ընդհանուր տեղակայման տարածք 57,200 քմ



երեք տեղակայման հատվածների (բջիջների) մակերեսով, 1,050 000 խմ աղբի ընդունման ընդհանուր ծավալով: Աղբավայրի սպասարկման համար նախատեսվում է ասֆալտապատ մուտքի ճանապարհ Երևան-Սևան մայրուղուց: Աղբավայրի մուտքը կահավորված կլինի դարպասով, իսկ ամբողջ տարածքը կցինկապատվի 2մ բարձրությամբ պողպատե ցանցով:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվաղողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսված են տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Ենթադրվում է, որ աղբի խտությունը կլինի 1.0 տ/խմ, որը հավասար է մարզային աղբավայրի 23 տարվա ընդհանուր ակնկալվող շահագործման տևողությանը: Աղբավայրը շահագործվելու է շաբաթական յոթ օր, օրը 10-12 ժամ և ապահովված է լինելու աղբատարով և դիմային բեռնիչով՝ աղբը ցրելու, խտացնելու և օրական կտրվածքով հողով ծածկելու համար: Ներքին ասֆալտապատ և գրունտային ճանապարհային ցանցը նույնպես կկառուցապատվի առաջին փուլի շինարարական աշխատանքների, ինչպես նաև աղբավայրի շահագործման ընթացքում: Աղբավայրի տարածքում նախատեսվում է նաև շինարարական աղբի մանրացման և տեսակավորման տարածք (10,000 քմ), վերամշակման

ենթակա նյութերի տեսակավորման /տարանջատման վայր (4,000 քմ), և օրգանական աղբի պարարտացման տարածք (17,000 քմ).

Նոր աղբավայրը նախագծված է աղբի հեռացման երեք հատվածներով կամ խցերով: Մեկ հատվածը կառուցվելու և շահագործվելու է միաժամանակ, առաջին խցի տարողությունը բավարար է 5-6 տարվա ընթացքում աղբի հեռացման համար: Հատվածներն ունեն կարծր հողի ստորին շերտ, որը ծածկված է բարձր խտությամբ պոլիէթիլենով, գրունտային ջրերի աղբյուրները և հարակից շրջակայքը գտվածքների տարածման ազդեցությունից պաշտպանելու համար: Հտվածքները հավաքվելու և պահվելու են հերմետիկ հատակով գոլորշիացման ավազանում:

Հտվածքի հավաքման խուցը տեղակայվելու է աղբատեղակայման հատվածից դուրս: Հտվածքի ողջ ուղին անցնելու է բարձր խտության պոլիէթիլենային /ԲԽՊ/ ինքնահոս խողովակներով բոլոր հատվածների համար /առանց որևէ պոմպի/: Հտվածքը հավաքվելու է ավազանում, որտեղ այն գոլորշիանալու է: Հտվածքի ավելցուկային քանակները բաքերով համալրված բեռնատարներով տեղափոխվելու է դեպի աղբահանման հատված, որտեղ լցվելու է աղբի վրա վերաշրջանառության համար: Վթարային ողողման լճակը /600 մ<sup>2</sup>/, կտեղակայվի գտվածքի լճակին հարակից տարածքում: Հտվածքի և վթարային ողողման լճակներում 5-10 տարին մեկ կիրականացվի մաքրման աշխատանքներ:

Շահագործման ընթացքում ազդեցությունը պայմանավորված է առաջացող գազային արտանետումներով: Գազերի հավաքումը նախատեսվող աղբավայրում արդյունավետ չի լինի աղբավայրի առնվազն 3 տարի շահագործման ընթացքում, որից հետո նախատեսվում է տեղադրել առաջնային գազերի հավաքման հորեր և համապատասխան խողովակաշարեր, որոնցով գազը կհասնի այրման սարքավորումներին:

Շահագործման ավարտից հետո աղբավայրի փակման աշխատանքները ներառում է՝ 0.1 – 0.2 մ հողի վերին շերտ, 0.8 մ կավահող, մանրախճային ջրահեռացման շերտ, ԲԽՊ միջնաշերտ, մանրախճային պաշտպանություն և գազի բաշխման շերտ, և 0.1 – 0.3մ կարգավորման շերտ:

### Փորձաքննական պահանջ

Անհարժեշտ է բացառել վտանգավոր թափոնների կուտակումը նախատեսվող աղբավայրում:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կազմակերպման աշխատաքային նախագծի գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերոնշյալ փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պահանջով:

Մասնագետ՝



Ա. Մինասյան